

Ե Բ Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

ՄԵՐ ԳՐԱՐԱՐԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ(1)

Այդ հարցը Պոլսի թէ Բուզարխայի մի հայ թերթ էր յարուցել . — Հանդիս Անսորեան տեսնելով զորս անկարելիութիւնը մեծօք էր . Պ. Արեղեանը Արարտի Թ., Ժ. եւ Է. համարներում (1897) շատ հիմնաւոր պատճառներով ցոյց էր տուել մեր գրաբարբառների բաժանումից առաջացած վնասը, նոցա միութեան կարեւորութիւնը, եւ ժառանգել արել այն ճանապարհը, որ արեւմտեան լիզուն որոշ զիջումներէից յետոյ հասկանալի կ'զատնար կոկիկատեան Հայերին : Պ. Մանդլինեանը (Արարտ, 1898, Գ. եւ Դ.) մի հմտալից յօդուածով ցոյց է տալիս, որ Պ. Արեղեանը՝ Ա. հարցը միակողմանի է դրել, ի նկատի ունենալով միայն երկու լեզուների ստուգաբանութիւնը, Բ. սխալ, կարծելով, որ Արարատեան լեզուն արեւմտեանից աւելի զարգացած է, Դ. կողմնակալ, միայն զիջումներ պահանջելով արեւմտեանից : Վերջ ի վերջոյ սակայն, երկունս էլ գալիս են այն եզրակացութեանը, որ լեզուներն հիմա միացընեւ անկարելի է, այլ պէտք է միայն մտեցնել : Մինք խորհուրդ կ'տայինք ընթերցողին անպատճառ կարգով յիշել յօդուածները, մասնաւոր Պ. Մանդլինեանինը, ուր լաւագոյն կէտը պէտք է նկատել երկու բարբառների համեմատութիւնը, որտեղից ամեն մէկը պարզօրէն պիտի տեսնի արեւմտեան բարբառի նրբութիւններն ու առաւելութիւնները :

Ինչքան էլ տարբերակ երեւայ, այսօր մի դառն իրողութիւն է մեր երկու գրաբարբառ ունենալը : Պատճառակ Հայաստանը սղալիսիբան չի՛ տեսել . հարկւար որ իշխաններ, միմեանցից անկախ մի քանի տէրութիւններ ունեցած ժամանակն էլ, նա ունեցել է ազգային միութեան երկու մեծ օգիր, մի՛ գրական լեզու եւ մի՛ եկեղեցի . եթէ կրօնական բաժանումը շատերին ցաւ է պատճառում, մեր լեզուների բաժանումը, մեզ, նոր սերնդին համար, թւում

է միանգամայն տարբերակ եւ մեր լեզուաչէնների անհեռատեսութեան մի ցաւալի ապացոյց . Պ. Մանդլինեան ասում է, որ Նազարեանից ու Նալբանդեանից առաջ արեւելեան հայերէնն արդէն խօսուում էր Ներսիսեան զգրողում եւ Հազարեան ճեմարանում . — Գործումը չարդարայան նրանք . Պարսկաստանում էլ այսօր անյուշա մի խօսուն հայերէն կայ, դա իրաւունք չի՛ տայ, որ մի նոր Նազարեան կամ Նալբանդեան հիմք դնեն . մի Պարսկահայգրական լեզուի, Եկեղեցիի իւր մէջ ծագող աղանդի հետ կուռել է, գրաբարը նոր ծաղկող աշխարհաբարի դէմ կատաղի կուռ է մղել, բայց սկզբից եւ ետ մի աշխարհաբար ունենալու հեռատեսութիւնը չեն ունեցել մեր լեզուի հիմնադիրներն . եւ մենք կատարում միջոցներն առող կանգնած, արեւմտական միջոցներով ենք ուզում նորա առաջն առնել : Այդ միջոցն էլ լեզուները միմեանց մտեցնելն է համարում : Սակայն, երկու առարկայ մտեցնելուց առաջ, պիտի չափենք նոցա մէջ եղած տարածութիւնը, նոցա ծանրութիւնը, եւ զորս վերայ կատարուելիք ծախսի քանակը . մի խօսքով մենք պիտի ընտրենք օգտակարն ու ննարաւորը : Եթէ մերն ծանր է եւ շարժման տեղը անյարմար, իմի կուռել թեթեւ ու աւելի շարժուն դիրքի մէջ, հասկանալի է, տարբական խնկըն էլ պիտի վերջինը առաջինին մտեցնել : առնասարակ դանակն են տանում եղան մօտ եւ ոչ հակառակը . — Այս տեսակէտը կարեւոր է, որ մենք, ամէն մի վճռից առաջ, անկողմնակալ եւ անաչառ կերպով դիտենք մեր լեզուների դիրքը . մեր եմ ասում, որովհետեւ այստեղ իմ եւ քօ չկայ . Դուրեանը մեզ նոյնքան սիրելի է որքան Պատկանեանը արեւմտեան հայերին, որովհետեւ նրանք երկունս էլ մերն են, նրանց երկուսի լեզուն էլ մեր սրտի, մեր հոգու հարազատ արքիւնքն է . ուստի մենք ամենայն ստանութեամբ պիտի աշխատինք որոշել մեր լեզուների փոխադարձ յարաբերութիւնը . թէ արտօքը իրերի բնական ընթացքը եռցակից 1) որի՛ն է առաւելութիւնն սուել, 2) որի՛ դերը աւելի ներգործակալն է, 3) մեր ազգային գիտակողմերին ու մտածութեան ուրուևուրիւնը որի՛ մեջ աւելի է ետեւան գալիս, եւ 4) նոցանից ո՛րն աւելի ունի կենդանի լինելու պայմանները : Ինձ թւում է որ սոքա են մեր լեզուների դիրքն ու նոցա կարեւորութիւնը բացատրող ծանրագոյն վայրկեանները : Եթէ այս հարցերին ուղիղ պատասխանել կարողա-

(1) Մեր գլխաւոր մտադրութիւններն մէկն էր . Անտիոսի մէջ գտնուի արեւելեան եւ արեւմտեան աշխարհագրութեան միացման, կամ գէժ տեսակ մը մտնեցման, ինքզուր, զոր առաջարկ մտայն մէջ սկսած են յուզել աստիճ մը ի վեր մի թանկ գործը եւ որուն ամենամեծ կարեւորութիւնը գրական օրբան ազգային տեսակետով՝ աւելորդ է բացատրել : Գո՞նք որ մեր Յերձի մէջ ուսանայ գրող մը կ'ըլլայ որ կը բանայ այդ հարցը : Գ. Լանդեանի նրբակնի եւ անաչառ բաղդատմութիւնը նշանակիլ կայտատ մըն է այդ խորոյն, որու մասին պիտի ընդհուպ ներկայացնենք մեր տեսութիւնները :

ցանք, ապա, ըստ իս, մօտիկ ապագայի համար գէթ, մենք մեր ուժերը ներածին չափ պիտի աշխատինք զիջումները թոյլից պահանջելու, թէ՛ եւ մենք հաւատացած ենք թէ՛ արեւտական զիջումները միշտ էլ պիտի մնան անաջող փորձեր :

Պ. Մանգինեանը ցոյց է տուել արեւմտեան լեզուի առուելութիւնները համոզիչ համեմատութեամբ, սակայն զորանով հարցը չլուծուեցաւ . միթէ՛ մեր աշխարհարարը համեմատուել կարող է իւր փարթեմ նախորդի՞ գրաբարի հետ, սակայն գրաբարը տեղի տուաւ . միթէ՛ նոր յունարէնը համեմատուել կարող էր իւր փարթեմութեամբ եւ պերճութեամբ յայտնի հին յունարէնի հետ, որին ըստ յաղթեց . միթէ՛ ռոմանական նոր լեզուները մի քանի զարաւջ համեմատուել կարող էին լատիներէնի հետ, որ նոքա տապալեցին : Յաղթողը լեզուի հարստութիւնն ու ճոխութիւնը չէ՛ : Յաղթողը ժամանակն ու խօսող ժողովուրդն է : Այստեղ, սակայն, պայմաններն արտաբնական հասարակ են . մեր երկու գրաբարաւորներն էլ մանուկ, երկուսն էլ խօսող, երկուսն էլ փոխադարձ յարաբերութեան որոշ չափով նսեւ փոխադարձ կողմի մէջ են . — Յաղթութեան մասին առ այժմ խօսք չի կարող լինել . այն էլ է յայտնի, որ արեւմտեանը աւելի փարթեմ է . ո՞րն է կենսունակ, ո՞րն է ազգող . այս է հարցը . — անտարակոյտ արեւմտեանը : Կեանքը, որ մասնակի համեմատութիւններից շատ աւելի լատուսեցիլ է, համոզիչ կերպով վճռել է այդ եւ ամէն օր մեզ ցոյց է տալիս, որ մենք չարունակ տպուծ եւ արտատպուծ ենք արեւմտեան լեզուով յօդուածներ ու գրքեր, այնինչ Պոլսեցիք, նոյն իսկ Նոր-Նախջեւանցիք կարիք են զգու՛մ մեր գրքերն ու յօդուածները թարգմանելու : Ի՞նչու նրանք իրանց մի այլպիսի նեղութիւն են պատճառում, իսկ մենք ոչ : Պատասխանը մի քանի կարող է լինել . կա՛մ նրանք մեր գրածը չեն հասկանում եւ կա՛մ մեր լեզուին չեն հաւանում : Իսկ մենք, եթէ չենք թարգմանում, թէ՛ հասկանալ պիտի կարողանանք եւ թէ՛ հաւանելիս պիտի լինինք : — Կըրթուած Թուսը առճասպակի գիտէ գերմաներէն եւ օգտուած է նրա գրականութեանից . կըրթուած Գերմանացին ո՞չ ռուսերէն գիտէ, ոչ էլ նրանից օգտուելու կարիք է զգում . — Այդ է իրերի բնական ընթացքը եւ լեզուների ուժաչափը . հասկանալի է որ ռուսերէնը անհամեմատ թոյլ է գերմաներէնից . կթէ՛ նոյն համեմատութիւնը նեղ չափերով վերցնելու լինենք, պիտի սեանենք մեր լեզուի թուլութիւնը արեւմտեան լեզուի յանդէմ : Իսկ թէ՛ Հայի մասնութիւնը աւելի անարատ է երեւում արեւմտեան բարբառի մէջ, քիչ թէ՛ շատ լեզուի ճաշակ ունեցողն ու մեր լեզուներով զբաղուող տարակոյտ ունենալ չի՛ կարող : Մենք չենք կարող երկու զոյգ մի կիստ գրողներ հաշուել, որ մաքուր, անարատ հայերէն գրէին, բայց արեւմտեան գրողների մեծագոյնն մաքր հայերէն գրողներն են : Եթէ մեզանում մաքուր հայերէն գրողներն են բացառութիւն, արեւմտեանի մէջ ընդհակառակը . — Զմոռանանք, որ մեր ամենամեծ վիպասանը, Բաֆֆին, եւ ամենամեծ հրապարակախօսը, Արծրունին, իրանց օտարաբան լեզուով, միմեանց հաւատար էին . — Այստեղ էլ ուրեմն, առուելութիւնը արեւմտեան բարբառի կողմն է : Յետոյ, լեզուի կենդանութեան հարցը . — Լեզուն կենդանի է միայն մարդկանց բերանում . ինչքան էլ մի լեզու հարուստ, փարթեմ եւ պերճ լինի, ինչպէս մի յունարէն, մի լատիներէն կամ մի հին հայերէն, նորա վիճակը մոռացութիւնն է, որովհետեւ չախօսող չունի, եւ մի լեզուի վիճակը կատարելապէս կարելի է որոշել նորա խօսողների թվով . — Ո՛վ էլ ո՞րքան հողի են արեւելեան գրաբարաբանութեանում, — ի՛մ հաշուով հազի մի երկու հազար հողի (1) : Այսօր ուստիերէն խօսողների թիւը աւելի շատ է, քան արեւելեան հայերէն կարող ենք մենք մի այլպիսի լեզու կենդանի անուանել . հաղի՛ւ : Հոչակաւոր Ներսիսեան զարձակատար օտար լեզուով են «ծեքախօսում» . ծանօթացէ՛ք մեր խմբագիր հրատարակիչների հետ, մեր այսպէս անուանեալ «ինտելիգենցիայի» հետ, մտէ՛ք անուանի հայ ընտանիքները, խօսեցէ՛ք հայ վարժուհիների, հայ դրածակների հետ, բոլորը, բոլորը օտարաբան են Բացառութիւնների մասին չէ, հար-

մատութիւնը նեղ չափերով վերցնելու լինենք, պիտի սեանենք մեր լեզուի թուլութիւնը արեւմտեան լեզուի յանդէմ : Իսկ թէ՛ Հայի մասնութիւնը արեւմտեան լեզուի յանդէմ իրերի բնական ընթացքով վճռած, եւ մեր բաղձաբով փոխառութիւնները յայտնի ապացոյց են զորան . հետագիր, շրագիր, քրոնիկից, երկաքուղիի, հեռախօս, արտասահման, հեծանիւղ եւ ուրիշ բաղձաբով ընտար ուսումնական բառեր մենք պարտական ենք միմիայն արեւմտեան լեզուին . ուր մենք փորձեր ենք ուրիշ ինքնուրոյն բարդութիւններ կազմելու, այնտեղ երեւում է մեր կատարեալ բորկութիւնը . — Իսկ թէ՛ Հայի մասնութիւնը աւելի անարատ է երեւում արեւմտեան բարբառի մէջ, քիչ թէ՛ շատ լեզուի ճաշակ ունեցողն ու մեր լեզուներով զբաղուող տարակոյտ ունենալ չի՛ կարող : Մենք չենք կարող երկու զոյգ մի կիստ գրողներ հաշուել, որ մաքուր, անարատ հայերէն գրէին, բայց արեւմտեան գրողների մեծագոյնն մաքր հայերէն գրողներն են : Եթէ մեզանում մաքուր հայերէն գրողներն են բացառութիւն, արեւմտեանի մէջ ընդհակառակը . — Զմոռանանք, որ մեր ամենամեծ վիպասանը, Բաֆֆին, եւ ամենամեծ հրապարակախօսը, Արծրունին, իրանց օտարաբան լեզուով, միմեանց հաւատար էին . — Այստեղ էլ ուրեմն, առուելութիւնը արեւմտեան բարբառի կողմն է : Յետոյ, լեզուի կենդանութեան հարցը . — Լեզուն կենդանի է միայն մարդկանց բերանում . ինչքան էլ մի լեզու հարուստ, փարթեմ եւ պերճ լինի, ինչպէս մի յունարէն, մի լատիներէն կամ մի հին հայերէն, նորա վիճակը մոռացութիւնն է, որովհետեւ չախօսող չունի, եւ մի լեզուի վիճակը կատարելապէս կարելի է որոշել նորա խօսողների թվով . — Ո՛վ էլ ո՞րքան հողի են արեւելեան գրաբարաբանութեանում, — ի՛մ հաշուով հազի մի երկու հազար հողի (1) : Այսօր ուստիերէն խօսողների թիւը աւելի շատ է, քան արեւելեան հայերէն կարող ենք մենք մի այլպիսի լեզու կենդանի անուանել . հաղի՛ւ : Հոչակաւոր Ներսիսեան զարձակատար օտար լեզուով են «ծեքախօսում» . ծանօթացէ՛ք մեր խմբագիր հրատարակիչների հետ, մեր այսպէս անուանեալ «ինտելիգենցիայի» հետ, մտէ՛ք անուանի հայ ընտանիքները, խօսեցէ՛ք հայ վարժուհիների, հայ դրածակների հետ, բոլորը, բոլորը օտարաբան են Բացառութիւնների մասին չէ, հար-

(1) Մտաւորապէս նոյն կարծիքն է յայտնում հայերէն լեզուների մի մասին եւ Պ. Արաբաբեանը ՄՈՒՌՁում :

կաւ, խօսքը . բացառութիւնը սովորաբար հաստատում է եղած իրողութիւնը : Մենք պիտի չմոռանանք Հրատ . ընկերութեան մի յայտնի նիստը , ուր մի Պոռչեան յանդիմանութիւն էր սանտուճ օտար լեզու հասկանալ չկարողանալու համար . ընորոշ , շատ ընորոշ են այս երեւոյթները , եւ ոչ ոք աւելի չի արձամարտում իր լեզուն քան հայ «նտէլլիզենտ»ը . — սա էլ քարիսցիտութեան մի նոր տեսակ է , գրել , քարոզել , խրատել որ ուրիշները սովորեն , բայց իրան միշտ հեռու պահել քարոզածից . Բաթիպայի , Նազարեանի եւ Սոււղուկեանի գաւակները իրանց հօր գործերին միայն ոռւսերէն թարգմանութիւնից են ծանօթ : — Երկարելն աւելորդ է :

Պետերբուրգ , Մոսկուա , Սարկով , Բերլին եւ այլ տեղեր հայ ուսանողները մեծամասնութիւնը հայերէն չի խոսում եւ շատերն իսկ չեն ի հասկանում հայերէն : Մայրենի լեզուի քաղցրութեամբ փայլում են ի մասնաւորի հայ ուսանողներից , մեր ապագայ մայրերը... Սեղանում դեռ մի հայ կին չերևաց , որ հայերէն մի որ եւ քան արտաղղեր . Տիկին Սասիսեանի եւ իշխանուհի Արղութեանի գործերի բընագիրը ոռւսերէն է :— Մի լեզու , որ կինը չի խօսում , որ մանկանոցի , օրօրոցի եւ ընտանիքի սեփականութիւնը չի՞ դարձել , նորա գոյութիւնն ու ապագան սաստիկ կտակածելի է : Եւ հայ հասարակութեան հոգեբանութեան հետ մի քիչ ծանօթ անձի համար շատ էլ զրախիչ չէ՞ այդ ապագան , եթէ իրերը այս ընթացքով շարունակուին :

Հարց է հիմա , արեօք արեւմտեան լեզուն խօսու՞մ է : Պոլիս տեսած չունիմ , բայց ինչ որ եզրակացնել կարելի է գրականութիւնից , լեզուի թիֆլեոսթիւնից , ձեւերի ճկունութիւնից , եւ արտայայտութիւնների կենդանութիւնից , այն է , որ այդ լեզուն կենդանի չըթուցներ յայտնի հետքեր է կրում . եւ մինչեւ անգամ կոտլ չըթուցներ հետքեր :— Անտարակայ Պոլսումն էլ մի ստուար դասակարգ թրքերէն է խօսում նոյն իսկ ընտանիքում — (հայ «բուրժուազ» միշտ օտարախօս է , ուր էլ որ նա լինի) , բայց նոցա քաղաքական եւ հասարակական պայմանները այնպէս են , որ հայերէնը մի մտած լեզու չի՞ մնացել ինչպէս մեզանում... Թէ հայերէնը նոցանում ընտանիքի լեզու է , երեւում է նրանից , որ նոքա արտաղղեր են ո՛չ միայն կին վերագրի ինչպէս տիկին Տիւսաքն է կամ տիկին Ավանանը , այլ եւ այնպիսի տաղանդաւոր հրա-

պարակախօս որպէս Տիկին Սիբիրն է , եւ բաւական է միայն Թիֆլիզի բեւը տեսնել , հանդուրեղու համար որ եթէ մի երկու ուղղից հայերէն խօսող գերասանուհի կան , Պոլսեցի կ :

Գանջ հիմա ժողովրդին , որ ոչ կարգալ գիտէ , ոչ էլ կատարելապէս հասկանալ է կարողանում մեր հնարած լեզուն :

Մեր ժողովրդի ամենից ատղջ , ամենից ընդունակ մասը , անտարակայ Ղարաբաղցիք են . ձեռնարկող , անձնախօս , եսական , բայց եւ մինչեւ ոսկորների ծուծը օտարամուլ , Դեռ աղին իր մինչեանն չի՞ փոխել , դեռ որդիքը չեն մոռացել իրանց հօր փայանը , որով հայրը միլիոններ է դիզել , բայց հայերէնը նոքա վաղուց են մոռացել : Ես մի Ղարաբաղցի շտեան , որ հայերէն կարգին խօսել խմանար : Իսկ մեր կրթութեամբի մէջ Ղարաբաղցիք ամենամեծ տական են կազմում : Եթէ ի նկատի ունենանք արեւելեան բարբառներով խօսող ժողովրդի թիւը , ապա նա 7—8 հարիւր հազարից աւելի պիտի չլինի , մինչ արեւմտեան բարբառներով խօսող հայերի թիւը հաւանօրէն միլիոն ու կիսից մինչեւ երկու միլիոն պիտի հասնի , եթէ նորանց մէջ հաշուենք Ղարա , Ալեքսանդրոպոլ , Ախալքալաք եւ այլն , իրանց բազմաճայ գաւառներով , որոնք իբրեւ Տաճկաստանցի գաղթականներ , բոլորն էլ արեւմտեան բարբառով են խօսում , թէ չլինենք նաեւ Օլթին , Մոտանանը , Սրիմը եւ Նոր-Նախիջևանը եւ այլն : Ուրեմն , արեւմտեան լեզուն , ժողովրդի թուով երկու անգամ գերազանց է արեւելեանից : Այս կէտը ծանրակշիռն ու ամենակարեւորն է , որովհետեւ ինչպէս սասցինք , կենդանի լեզուի կարեւորութիւնը կախում է նորա խօսողների թուից : Յետոյ չպիտի մոռանալ արեւմտեան հայերի գերազանցութիւնը լեզուի եւ ճաշակի վերաբերմամբ : Նրանք առ հասարակ խօսելու ընդունակութիւն ունին . «նոս՛նոս» սանրով մենք հասկանում ենք նաեւ շատախօս . դա էլ ընդունակութիւն է , շատախօս լինելու համար լեզու պէտք է ունենալ , իսկ լեզուն տիրելու եւ իրանց մտքերը լաւ արտայայտելու համար ընդունակութիւն . . . Մի Սրիմեան , մի Սըրուանձտեան , մի Նարեյ , մեզ համար մտում են տիպար խօսողներ , որոնց նմանը մենք ո՛չ ունեցի ենք , ոչ էլ ունենց :

Մոռանալու էլ եւ այն , որ մեր լեզուի մեծագոյն հիմնադիրները , Նալբանդեան եւ Բաթիպա , եւ նորա առաջին քերականութիւն կազմողը , Պալասանեան , արեւմտեան Հայերէն

էին . եւ այսօր մեզանում հայ զրականութեամբ եւ լեզուով զբաղուողներին յայտնիները զարձակ արեւմտեան հայերից են, ինչպիսեան, Կոստանեան, Տէր-Մկրտչեան, Մայիսսեան եւ այլն : Մենք տանեակ բառարաններ ունենք եւրոպական լեզուների համար, եւ ոչ մի բաւարար բառարան ուսեբէնի համար . դա մի շատ բնորոշ երեւոյթ է . հարիւրաւոր համալսարանականների մէջ, մի Յովհաննիսեան եւ մի Նազուբեան են փորձել բառարաններ կազմելու, թէեւ երկուսի մասնագիտութիւնն էլ լեզուաբանութիւնն չէ : Դրանք երկուսն էլ արեւմտեան Հայերից են (Ալեքսանդրապոլ եւ Ալալաքալաք) : մարինի լեզուի սէջն ու նրա ուսումնասիրութեան բնազդը անհամեմատ աւելի հին ու զօրեղ է արեւմտեանների մէջ . մենք ամեն բանում նրանց աշակերտներն ենք :—

Մեր արժարժած անկողնական դիտողութիւններից եղականցնելը զժուար չէ, որ իրերի բնական ընթացքը բոլոր կարեւորագոյն եւ արմատական առաւելութիւնները տուել է արեւմտեան բարբառին . արդ՛ հարկ կա՞յ այդ առաւելութիւնների զէ՞մ կրուելու, — երբե՞ք : Երբ հարցը միմեանց մտեանալն է, երբ մենք տեսնում ենք արեւմտեան բարբառի առաւելութիւնը, ամենախելացի միջոցն այն է, որ օգտուինք նրա առաւելութիւնից, աշխատինք նմանել նրան, վերցնենք նորանից այն, ինչ որ մեզ հարազատ ու պիտանի է թւում, եւ ջրնջնք մեր լեզուից այն տարրերը, որոնք խորթ, օտար ու անհաշակ են . — Պ. Արեղեանի միթոսօփ սխալն այն է, որ արեւմտեաններին խրատ է տալիս այս կամ այն ձևով մեզ մտեանալու . աւելի խելացի կ'լինէր, եթէ նա մեզ խրատէր արեւմտեանի այս կամ այն առաւելութիւնից օգտուելու :

Առանց լեզուների միութիւնն ի նկատի ունենալու, մենք տարիներ շարունակ զբաղած ենք եղել մեր լեզուի սշակութեան խնդրով եւ զարմանալին այն է . եղել ստացած արդիւնքներից, որ ինչ որ մեր լեզուում ուղղել, կոկիւ ու պարզել հնարաւոր է եղել, հետեանք շատ ու շատ տեղերում նման է դուրս եկել արեւմտեան ձևերին :

ԳՐԻԳՈՐ ՎԱՍՑԵԱՆ

Բերլին, 10 Օգոս. 1898

ՄՏՔԻՍ ԽԱՌՆԱՐԱՆԷՆ

ԵՐԳԵՐ

Ա

Սառոյցէ կապայ հագցուցիր ինձի, ու տանջեցիր զիս, սիրելի՛ս . սառոյցին փուշերը, սո՛ր սո՛ր, մարմինս ասղնտեցին, արեւնուայ չարչրկեցին :

Երեք տարի կայ, սիրականս, ինձի հագցուցիր կրակէ պատմուճան . ատիկա սէրդ էր . ու անմատչելի եղած էի ես . քեզմով հպարտ էի, քեզմով կո՛յր էի :

Եւ վառուեցայ տարիներով, մե՞ղք որ չայրեցայ, մոխիր չզարձայ : Հողմը զիս ս՛ր չէր տանար :

Սառոյցէ կապայ հագցուցիր ու կը տանջես զիս . ու ինչպէս կրակը զիւ չայրեց, անանկ ալ սառը չի պաղեցնիր :

Կրակը չարչարեց զիս, խանձեց զիս, տանջեց զիս . սառոյցն ալ կը չարչարէ, կը տանջէ զիս . խորունկ սիրտս սակայն՝ նոյնը կը մնայ միշտ . հագուստս միայն փոխեցիր, սիրելի՛ս :

Ու զոնէ ուրախ եմ, այսպէս ինձմով կրքեղիս : Վա՞րն ալ, թէրեւս, հողէ կապայ հագցնես ինձի, սիրելի՛ս :

Բ

Կարմրած նետերու պէս էին նայուածքներդ . սիրտս խոցեցիր :

Տարիներով խշխշաց սիրտս, երբ չէի նայուածքդ զամուսեցաւ հոն . հիմա կ'ուզես զուրս քաշել ու նորէն կը խշխաջնես :

Արիւնք ջրամեղի, ջրջիկ եղար : Վերքը որ բացիր, չլզացի . թեւովդ ալ մէկ կողմանէ կը հովա՛հրիր :

Ու անգուն ջրջիկի մը պէս, ննջարանիս մութին մէջ թռչտեցար . միշտ երազուն պահեցիր զիս :

Կէս քուն, կէս արթուն, ամիսներ անցուցի . բարձիս վրայ կը թատէիր մղձաւանջի մը պէս, սիրականս :

Գ

Շարաթ իրկուճ էր : Մեռելոցի խունկը ծըխուած էր մեր տան ամէն յարկերուն մէջ :

Մենք բարձրացանք Գուղկունճուճի լեռնաբուն վրայ, եւ ուրուականներու պէս սկսանք միմեային թափառիլ . սիրականս, մոռցար :

Հոն ալ միշտասկներու հոգեկան խունկը պիտի ծխէինք . բացիր խնկածուխ քերանդ ու ամբողջ լեռ միայ սկսաւ : Սինայի վրայ էինք . հողք Գորբե գացինք, ուր ես վառեցայ երբ համարեցիր զիս : Ու կը թոթովէին մեր լեզուները :

Դ

Հնչեցին տխուր կոչնակները եւ զարբեր ա-